ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ/2024/L-17 >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան **«15». 02. 2024թ.**

Ժամը 17:30

ՕՐԱԿԱՐԳ.

ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար **օդորակիչների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ/2024/L-17** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ/2024/L-17 ծածկագրով ընթացակարգին նվազագույն գին առաջարկած մասնակից՝ «LA IMPORT» LLC-ի կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես. հայտում հրավերով պահանջվող Հավելված 1-ը /դիմում հայտարարություն/ ներկայացվել է առանց ստորագրման, սխալ ընթացակարգի ծածկագրով, սխալ չափաբաժինների քանակով, չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը /Հավելված 1.3/, ինչպես նաև տեխնիկական բնութագրում առաջարկվող ապրանքի նկարագրում նշված չեն ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և համապատասխան առաջարկվող տեխնիկական բնութագիրը:

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ/2024/L-17 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 13.02.2024 թվականին «LA IMPORT» LLC-ին տրամադրել մեկ /1/ մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկում կատարելու համար, սակայն «LA IMPORT» LLC-ի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 6–րդ կետի բ/ ենթակետի պահանջները մասնակից «LA IMPORT» LLC-ի հայտը ենթակա է մերժման, վերջինս կներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
- ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ/2024/L-17 ծածկագրով գնման ընթացակարգը համարվում է չկայացած, քանի որ «LA IMPORT» LLC-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են:
- Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ ընթացակարգը հայտարարում է չկայացած:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ՆԱՀ և ԳԱ բաժնի պետ Ս. Սեդրակյան

Հանձնաժողովի անդամներ՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ՆԱՀ և ԳԱ բաժնի գլխավոր մասնագետ Ն. Ստեփանյան

ՀՀ ՆԳՆ ՏՎ ՆԱՀ և ԳԱ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Գասպարյան

Քարտուղար՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀԲ գլխավոր մասնագետ Լ. Սահակյան